

# Թվադարան

Փոքրիկ Արան ունի թվադարան, որի գրպանիկներում դրված են քարտիկներ, յուրաքանչյուր քարտիկի վրա գրված է մի թվանշան: Արան ընտրել է մի  $n$  բնական թիվ և փորձում է այդ քարտիկներով կազմել  $n, 2n, 3n, \dots$  հաջորդականությունը: Հարկավոր է գտնել այն  $k$  թիվը, որ  $kn$ -ը կազմելուց հետո թվադարանում մնացած քարտիկներով հնարավոր չի լինի հաջորդ թիվը ստանալ:

## Մուտքը

Առաջին տողում տրված է  $n$  ( $n < 1000$ ): Հաջորդ տողում տրված է 10 թիվ, համապատասխանաբար 0-ների, 1-երի, ..., 9-երի քանակը թվադարանում: Այդ թվերից յուրաքանչյուրը 100-ին չգերազանցող ոչ բացասական ամբողջ թիվ է:

## Ելքը

Պետք է արտածել վերևում նկարագրված  $k$  թիվը:

## Օրինակ

Մուտքը.

11

3 2 3 2 3 2 3 2 3 2

Ելքը.

9